ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 24-Ն

11 հունիսի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի 8931.4 թիվը փոխարինել 5531.4 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի 8000.0 թիվը փոխարինել 11000.0 թվով, 5134 (նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում) հոդվածի 200.0 թիվը փոխարինել 350.0 թվով:
3. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4657 (այլ ընթացիկ դրամաշնորհներ) հոդվածի 0 թիվը փոխարինել 250.0 թվով:
4. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4657 (այլ ընթացիկ դրամաշնորհներ) հոդվածից 250.0 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ հատկացնել Մարալիկի արհեստագործական ուսումնարանին, 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածից 50.0 (հիսուն հազար) դրամ հատկացնել <<Հայաստանի Հանրապետության Պատերազմի, Զինված Ուժերի, Աշխատանքի և Իրավապահ Մարմինների Վետերանների Միավորում>> հասարակական կազմակերպության Անիի մասնաճյուղին:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
11 հունիսի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 25-Ա

<<11>> հունիսի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սեփականության 2013 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ-ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ-ԿՈՂՄ

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 26

11 հունիսի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ 4-ՐԴ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ համայնքի երեխաների ծնողների դիմումները՝ Մարալիկ համայնքի նախադպրոցական հիմնարկում 4-րդ խումբ (նախակրթարան) բացելու մասին և հաշվի առնելով, որ Մարալիկի համայնքային նախադպրոցական հիմնարկը չունի նորմալ շենքային պայմաններ 4-րդ խումբ ապահովելու համար և կա Մարալիկի թիվ 1 միջն. դպրոցի տնօրենի համաձայնությունը նախակրթարանին տարածք հատկացնելու վերաբերյալ ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն 2014 թվականի սեպտեմբերի 1-ից Մարալիկի թիվ 1 դպրոցի կողմից հատկացված տարածքում բացել Մարալիկի համայնքային նախադպրոցական հիմնարկի 4-րդ խումբը (նախակրթարան):
2. Խմբի աշխատանքային ժամ սահմանել ժամը 9:00 - 13:00:
3. Ծնողական մուծումը սահմանել ամսեկան 2000 /երկու հազար/ դրամ:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ-ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ-ԿՈՂՄ

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
11 հունիսի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 27

11 հունիսի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Մարալիկի քաղաքային կենտրոնական հրապարակում տեղադրել հուշակոթող, նվիրված Հայող ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ-ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ-ԿՈՂՄ

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
11 հունիսի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 28

«11» հունիսի 2014 թվական քաղաք Մարալիկ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 5 կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ-ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ-ԿՈՂՄ

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
11 հունիսի 2014 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ԹԻՎ 28 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

N	Ազգանուն, անուն	Գումարի չափ
1.	Հակոբյան Անահիտ	10000 (տաս հազար) դրամ
2	Օլեյան Լիզա	10000 (տաս հազար) դրամ
3	Բոթոյան Իլիկո	15000 (տասնհինգ հազար) դրամ
4	Սարգսյան Մարգարիտ	20 000 (քառասուն հազար) դրամ
	Ընդամենը	60 000 (վաթսուն հազար) դրամ